ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«10» դեկտեմբերի 2020 թվական N 205-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻ, ԿՐՊԱԿՆԵՐԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՅԼ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՆՉԵՎ 20,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 208-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 46.2-րդ կետի «ա» ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում ավտոտնակների, կրպակների, առևտրի և սպասարկման այլ օբյեկտների տեղադրման նպատակով առանց մրցույթի մինչև 20,0 (քսան) քառակուսի մետր մակերեսով հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման համար սահմանել վարձավճարներ՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տաղավարների, կրպակների, առևտրի ու սպասարկման այլ օբյեկտների և ավտոտնակների տեղադրման նպատակով առանց մրցույթի մինչեվ 20,0 (քսան) քառակուսի մետր մակերեսով հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման 2020 թվականի վարձավճարների չափերը սահմանելու մասին» N 208-Ա որոշումը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Կողմ (21)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)

Ս. Բալասանյան
Հ. Կարապետյան
Լ. Խաչատրյան
Տ. Հովհաննիսյան
Մ. Սահակյան
Լ. Սանոյան
Վ. Եդիգարյան

Գ. Սարգսյան
Տ. Փանոսյան
Կ. Թաթարյան
Ս. Աստոյան
Ա. Խաչատրյան
Ա.Աղանյան
Ռ. Սարգսյան
Լ. Բարսեղյան
Ա. Գրիգորյան
Ա. Խաչատրյան
Գ. Մաթևոսյան
Հ.Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ

քաղաք Գյումրի
«10» դեկտեմբերի 2020 թվական

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 10-ի
N 205-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻ, ԿՐՊԱԿՆԵՐԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՅԼ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՆՉԵՎ 20.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ

1. ԿՐՊԱԿՆԵՐԻ, ԱՌԵՎՏՐԻ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՅԼ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

N	Հողամասի գտնվելու վայրը	Մեկ քառակուսի մետրի ամսեկան վարձավճարը (ՀՀ դրամ)
1.	Շահումյան փողոց (կենտրոնական հրապարակից մինչև Ավտոկայան) Հաղթանակի պողոտա (Խաղաղության օղակից մինչև Զորավար Անդրանիկի հրապարակ) Արագածի փողոց, Մայակովսկու փողոց (Հաղթանակի պողոտայից մինչև Աբովյան փողոց)	1700 (մեկ հազար յոթ հարյուր)
2.	Կենտրոնական հրապարակ Ռիժկովի (Կիրովի) փողոց Անկախության հրապարակ Ավտոկայանի տարածք Գայի փողոց Տերյան փողոց (Գ. Նժդեհի հրապարակից մինչև Աբովյան փողոցն ընկած հատված) Բագրատունյաց (Խաղաղության) օղակ Սայաթ-Նովա փողոց Պ. Սևակ փողոց Շառլ Ազնավուրի հրապարակ Ս. Համբարձումյան փողոց Սպանդարյան փողոց (Կետրոնական հրապարակից Հաղթանակի պողոտա)	800 (ութ հարյուր)
3.	Կայարանամերձ հրապարակ Գորկու փողոց Շահումյան փողոց (Ռուսթավելի փողոցից մինչև Պուշկինի փողոց) Աբովյան փողոց (Ռուսթավելի-Տերյան) Տիգրան Մեծի պողոտա Գ. Նժդեհի պողոտա Շիրակացի փողոց Խրիմյան Հայրիկ փողոց Ալեք Մանուկյան փողոց (50-ամյակի փողոց) Պուշկինի փողոց Մուսայելյան փողոց	600 (վեց հարյուր)

	«Անի» թաղ. (7-րդ փողոց, Պ. Սևակից մինչև Ե. Չարենց) Խորենացի փողոց Կ. Սարգսյան փողոց	
4.	Սևյան փողոց Իսահակյան փողոց Մանուշյան փողոց Կոշտոյան փողոց Ռուսթավելի փողոց Շչերբինա փողոց Մ.Մկրտչյան փողոց Ներսես Շնորհալի փողոց Պռոշյան փողոց Մ. Ավետիսյան փողոց Տ. Ճարտարապետի փողոց Չարենցի փողոց Կարսի խճուղի Բուլվարային փողոց Կ. Դեմիրճյան (Քութահիսյան) փողոց Թետչերի փողոց Շինարարների փողոց Խանջյան փողոց Սավոյան փողոց Օզանյան փողոց	450 (չորս հարյուր հիսուն)
5.	Քաղաքի մնացած տարածքներում	250 (երկու հարյուր հիսուն)

2. ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

N	Հողամասի գտնվելու վայրը	Մեկ քառակուսի մետր ամսեկան վարձավճարը (ՀՀ դրամ)
1.	I գոտի	110 (մեկ հարյուր տաս)
2.	II գոտի	100 (մեկ հարյուր)
3.	III գոտի	80(ութսուն)
4.	IV գոտի	70(յոթանասուն)

Քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի

պարտականությունները կատարող՝ Ս.Մուրադյան